

Իր եղբակացութեան մէջ, Յ. Շահպաղեան աւելի յստակ կերպով ցոյց կուտայ, որ տակաւին 1911-ին (իր գիրքը լոյս տեսած է Պոլիս, 1911-ին) հայ քաղաքական միտքը լիովին չէր ըմբռնած հայ-քրդական համագործակցութեան մը կարեւորութիւնն ու կարելիութիւնը: Եւ հեղինակը կը մնայ նոյն տարտամ մտքերով, ինչ որ ունեցած էին թրքասէր հայ հատուածները Մատթէոս պատրիարքի օրով (1846):

Բէգերիսան բէյի շարժման մասին Յ. Շահպաղեան հետեւեալ կերպով կ'արտայայտուի, որպէս եղբակացութիւն.

«Այս բացարձակ վտանգաւոր եւ անկարելի ծրագիրը գործադրութեան դնել կ'աշխատէր, ի հարկէ հիմնուած միայն բռնի ուժի վրայ, առանց նկատի ունենալու հայ ժողովրդի տրամադրութիւնը, որ ոչ միայն չէր ուզեր կորսնցընել իր ինքնուրոյնութիւնը, այլ եւ պէտք ունէր հանդիստի ու խաղաղ բարգաւաճման, եւ երբեք չէր զիմեր նման վտանգաւոր եւ անորոշ քայլերու: Ատոր համար էր երբ օսմանեան բանակը Հայաստան մտաւ, ժողովուրդը զիմեց օսմանեան բանակին, անոր միացաւ, անոր հետ կոռնեցաւ եւ կախաւորելով Բէգերիսան բէյը յանձնեց օսմ. իշխանութեան»: (Էջ 88):

Անհասկնալի կը մնայ թէ ինչո՞ւ համար Յ. Շահպաղեանը «վտանգաւոր եւ անկարելի» կը նկատէ Բէգերիսան բէյի ծրագիրը, երբ այս վերջինը տէր դարձած բռնի Քիւրդիստանին, իր տիրապետութիւնը հասցուցած էր մինչեւ Վանի դռները, երբ իրեն զինակից էին հազարաւոր զինուած հայեր, որոնք թրքական լուծին տակաւին ենթակայ եղած չէին: «Բռնի ուժ»ի եւ հայ ժողովուրդի «ինքնուրոյնութեան» մասին խօսելն աւելորդ է: Շատ բնական է որ ազատագրական շարժումը իր խտուրթեամբ պիտի արտայայտուէր Թուրքիոյ դէմ, ու անոնք որ դէմ պիտի դային Բէգերիսան բէյի ծրագրին, պիտի ենթարկուէին նաեւ բռնի ուժին: Եւ վերջապէս, հայութիւնը ի՞նչ «ինքնուրոյնութիւն» ունէր, բացի առեւտրական միջնորդի իր պաշտօնէն, միշտ կախուած թրքական փաշաներու քմահաճոյքներէն:

Պարզօրէն կ'երեւի վերի արտայայտութիւններէն որ հեղինակը տակաւին կը դեղերի թրքական բարենորոգումներու շուրջ եւ կը

կարծէ որ «հանգիստի եւ խաղաղ բարգաւաճումի» պէտք ունեցող հայ ժողովուրդը պիտի միանար օսմանեան բանակին: Սակայն, 1847էն մինչեւ 1911 թուականը անցած էին 64 տարիներ, եւ պատմական անցքերը ցոյց տուած էին, որ սպասուած խաղաղութիւնն ու բարգաւաճումը Հայաստանին երբեք բաժին չինկան:

* * *

Հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը, հայութեան ղեկավար տարրերը (մասնաւորաբար Հայաստանէն դուրս հաստատուած մարմինները) հայ-քրդական յարաբերութիւններուն չեն մօտեցած քաղաքական տեսակէտներով, այլ միայն ներքին յարաբերութեան շահախնդրութեամբ: Թալանն ու կողոպուտը, աշխիւթական արշաւներն ու քրդական ինքնագլուխ արարքները բողոքի նիւթ դարձած են: Ու թրքական կառավարութիւնը շատ յաճախ սիրով մտիկ ըրած է հայերու յաւիտենական բողոքները, ստեղծելով եռանկիւնի կեանք մը հայերու, քիւրդերու եւ թուրքերու միջեւ, հանդիսանալով երրորդ խոշոր ուժը, որու հիմնական նպատակն էր միւս երկու ուժերը ջլատել, օր մը մէկի, օր մը միւսի հետ ըլլալով:

Հայութիւնն իսկապէս բաժնուած էր երկու խոշոր հոսանքներու, եթէ կարելի է այսպէս անուանել այն ժամանակուան երեւան եւ կած ուժերը: Մէկը հայոց պատրիարքարանը, քաղաքներու առաջնորդարաններն ու ունեւոր քաղաքացիներն էին, որոնք թրքական օրիանդացիա ունէին. իսկ միւսը լեռնական հայ իշխաններն ու զինուած հայ աշխիւթներն էին, որոնք քրդական իշխանապետութեան կողմնակից էին, ու ատով ալ կը պահպանէին իրենց կէս անկախութիւնը:

Նախ քանի մը խօսք ընենք այն զիրքի մասին, որ հայոց պատրիարքարանը բռնած է Բէգերիսան բէյի շարժման առթիւ:

Հայոց բռնած զիրքը բացայայտօրէն կ'երեւի հետեւեալ հատուածէն, որ կը գտնենք Ա. Պէրպէրեանի Հայոց Պատմութեան մէջ, եւ որ զրուած է 1871 թուին:

«Յաղագս ազատութեան հայոց բնակելոց ի Վասպուրական, ի Տարօն, եւ ի Բագրեւանդ գաւառս ի հարստահարութենէ բարբարոս ագ-